

ԴԱՍ 37. ՔԻՄԻԱԿԱՆ ՌԵԱԿՑԻՎՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ
(նոր նյութի ուսումնասիրության դաս)

Ուսուցիչ _____

Առարկան - Քիմիա		
Դասարանը – 7-րդ	Ուստարի – 2020-2021	Կիսամյակը – 2-րդ
Թեման	Քիմիական ռեակցաներ	
Դասի նպատակը	<ol style="list-style-type: none"> 1. Սովորողների մեջ ձևավորել գիտելիք քիմիական ռեակցիաների և հավասարումների վերաբերյալ: 2. Սովորողների մեջ զարգացնել գործնական հմտություններ քայքայման և միացման ռեակցիաների օրինակներով: 3. Նպաստել սովորողների ճանաչողական, վերլուծական, եզրակացություններ անելու կարողությունների զարգացմանը: 4. Նպաստել հաղորդակցման հմտությունների, մշակույթի ձևավորմանը խմբային աշխատանքի կազմակերպման միջոցով: 	
Վերջնարդյունքները	<p>Արդյունքում սովորողը պետք է կարողանա՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Ք7.ՔՈ.ՔՈՂ.6 Սահմանի միացման և քայքայման ռեակցիաները: Ներկայացնի և տարբերի ռեակցիաների հավասարումները պարզ նյութերի և երկտարր միացությունների (օքսիդ, քլորիդ, սուլֆիդ) օրինակներով: 2. Ք7.ՔՈ.ՔՈՂ.2 Գործնականում իրականացնի միացման և քայքայման ռեակցիաները: Մեկնաբանի դիտարկումները: 3. Ք7.ՔՈ.ՔՈՂ.7 Կիրառի քիմիական ռեակցիաների դասակարգման մասին ստացված գիտելիքները վարժությունների լուծման համար: (Այս վերջնարդյունքը հիբիդային է, զարգացվում է բոլոր դասերի ընթացքում): 	
Միջառարկայական կապերը	<p>Հայոց լեզու - Կարդալ, հասկանալ կարդացածը, առանձնացնել կարդացածի կարևոր (պահանջվող) գաղափարները: Կարողանալ ներկայացնել նյութի հիմնական գաղափարը բանավոր և գրավոր: Կարողանալ ճիշտ ձևակերպել հարցերը, այդ թվում՝ հետազոտական հարցերը:</p> <p>Մաթեմատիկա - Կատարել մաթեմատիկական հաշվարկներ:</p> <p>Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն - Աշխատանք տեքստային խմբագրիչներով, ցուցադրական նյութերի պատրաստման և համացանցում որոնողական աշխատանքների հմտություններ:</p>	
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ	Դասագիրք, առաջադրանքների քարտեր, լաբորատոր աշխատանքի համար նախատեսված սարքավորումներ և նյութեր:	
Ուսուցման մեթոդներ	Զրույց, քննարկում, մտազրոհ, ցուցադրում, խճանկար, դիտում, աշխատանք դասագրքով, աշխատանք քարտերով և այլն:	


отформатировано: английский (США)

отформатировано: английский (США)

отформатировано: английский (США)

отформатировано: английский (США)

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ


Դասի փուլերը	Փուլի խնդիրները	Ուսուցչի գործողությունները	Աշակերտի գործողությունները
1. Կազմակերպական մաս (1-2 ըրպե)	Նախապատրաստվել դասին:	Աշակերտների և ուսուցչի փոխադարձ ողջույն, բացականչերի ամրագրում:	Պատասխանում են ուսուցչի հարցերին:
2. Հետաքրքրության խթանում (3-4 ըրպե)	Շարժել սովորողների հետաքրքրությունը ուսումնասիրվող թեմայի նկատմամբ:	<p>Ներկայացնում է հետաքրքիր միացման կամ քայքայման փորձեր և լսում է աշակերտների կարծիքները տարբեր իրավիճակներում «քիմիական ռեակցիա» բառակապակցության իմաստային դրսևորումների մասին.</p> <p>Իսկ ի՞նչ իմաստ ունի ռեակցիան քիմիայում:</p> <p>Ուշադիր նայեք նկարին և փորձեք որոշել, թե որ դեպքում է նկատվում (ընթանում) քիմիական ռեակցիա:</p> 	<p>Մտազրոհի մեթոդով պատասխանում են ուսուցչի հարցին: Օրինակ՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Բոլոր դեպքերում: 2. Միայն մեկ նկարի համար (եթե մի քանի նկարներ են) :
3. Դասի թեմայի և նպատակի ձևակերպում (2-3 ըրպե)	Քննարկման արդյունքներից բխեցնել դասի նպատակը:	<p>«Քիմիական ռեակցիա» հասկացությունն ունի որոշակի իմաստ և օգտագործվում է միայն այն ժամանակ, երբ տեղի է ունենում քիմիական երևույթ (փոխարկում): Նման դեպքում ասում են, որ ընթանում է քիմիական ռեակցիա:</p> <p>Այսօրվա դասի թեման է «Քիմիական ռեակցիաների տեսակները»: Դասի նպատակն է ծանոթանալ քիմիական ռեակցիաների տեսակներին:</p>	Աշակերտները տեսարում գրում են դասի թեման և նպատակը:





		<p>Զարգացնել և գործնականում կիրառել միացման և քայքայման ռեակցիաների տեսակները, սովորել էրբ է ընթանում միացման , քայքայման ռեակցիաներ, ինչպե՞ս կարելի է դրանք տարբերել:</p>	
<p>4. Ուսումնական նյութի նախնական յուրացում (6-8 թույլ):</p>	<p>Ներմուծել «քիմիական ռեակցիա» հասկացությունը:</p> <p>Քննարկել, թե որ դեպքում է ընթանում քիմիական ռեակցիա:</p>	<p>Մենք կատարում ենք հետևյալ հաջողական քայլերը.</p> <p>Քայլ 1. Տալ ռեակցիայի սահմանումը և բերել օրինակներ: Հանձնարարում է աշակերտներին դասագրքի § 2.5-ում գտնել միացման և քայքայման ռեակցիաների սահմանումները.</p> <p><i>Քայքայման է կոչվում այն ռեակցիան, որի դեպքում մեկ բարդ նյութի քայքայումից ստացվում է երկու կամ ավելի նյութ:</i></p> <p><i>Միացման է կոչվում այն ռեակցիան, որի դեպքում երկու կամ ավելի նյութերից ստացվում է մեկ բարդ նյութ:</i></p> <p>Բերում է քիմիական ռեակցիայի մի քանի օրինակ, հանձնարարում է սովորողներին տարբերակել օրինակները՝ ըստ տեսակների:</p> <p>$2KMnO_4 \rightarrow K_2MnO_4 + MnO_2 + O_2$</p> <p>$2KClO_3 \rightarrow 2KCl + 3O_2$</p> <p>$2Na + Cl_2 \rightarrow 2NaCl$</p> <p>$S + O_2 \rightarrow SO_2$</p> <p>$2Ca + O_2 \rightarrow 2CaO$</p> <p>Քայլ 2: Համեմատել քիմիական ռեակցիաները: (Ի՞նչ նմանություններ և տարբերություններ են նկատվում սահմանումների և օրինակների միջև): Կամ Վեննի դիագրամով ներկայացնել համեմատությունը:</p> <p>Քայլ 3: Բերում է օրինակներ.</p>	<p>Աշակերտները տետրում գրում են նմանությունները և տարբերությունները, կամ պատկերում են Վեննի դիագրամը:</p>

отформатировано: русский

отформатировано: русский

отформатировано: русский



Реакция соединения	$A + B = AB$	
Реакция разложения	$AB = A + B$	
Реакция замещения	$A + BC = AC + B$	
Реакция обмена	$AB + CD = AD + CB$	

բ) Նայում է նկարին և դասակարգում ռեակցիաները՝ ըստ տեսակների:

По числу и составу реагирующих и образующихся веществ (в неорганической химии)

ТИП	схема	примеры
РЕАКЦИИ СОЕДИНЕНИЯ		$Zn + S = ZnS$ $CaO + CO_2 = CaCO_3$
РЕАКЦИИ РАЗЛОЖЕНИЯ		$2HgO \xrightarrow{\Delta} 2Hg + O_2$ $Cu(OH)_2 \xrightarrow{\Delta} CuO + H_2O$
РЕАКЦИИ ЗАМЕЩЕНИЯ		$CuO + H_2 \xrightarrow{\Delta} Cu + H_2O$ $Zn + 2HCl = ZnCl_2 + H_2$
РЕАКЦИИ ОБМЕНА		$Ca(OH)_2 + H_2SO_4 = CaSO_4 + 2H_2O$ $AgNO_3 + HCl = AgCl + HNO_3$

5. Ընթրնման, իմաստավորման փուլ (15-21 բուպե)

Ձևավորել ձեռք բերած տեսական գիտելիքները կոնկրետ իրավիճակներում կիրառելու կարողություններ:

Նպաստել թիմում աշխատելու, համագործակցելու կարողությունների զարգացմանը:

Ուսումնասիրված նյութն ամրապնդելու նպատակով սովորողներին առաջարկում է կատարել խմբային աշխատանք (խճանկարի մեթոդ կամ այլ մեթոդ): Դրա համար դասարանը բաժանում է խմբերի և նույն խմբի յուրաքանչյուր աշակերտին տալիս է առաջադրանքների մեկական քարտ (նույն հարցերը, բայց տարբեր ռեակցիաներով) ըստ թերթիկի գույների կամ համարների: Յուրաքանչյուր քարտ կարող է պարունակել 1-2 խնդիր կամ ընտրովի պատասխանով առաջադրանքներ:

Աշակերտներին հանձնարարվում է հատկացված ժամանակում կատարել առաջադրանքները:

Այնուհետև խմբերը վերախմբավորվում են ըստ թերթիկի գույների կամ համարների: Վերախմբավորման արդյունքում

Սովորողները կատարում են իրենց տրված առաջադրանքները:

Խմբերն արդյունքները ներկայացնում են դասարանին:

		<p>խմբերում բոլորի մոտ նույն հարցերով քարտերն են:</p> <p>Աշակերտներին հանձնարարվում է հատկացված ժամանակում իրար հետ քննարկել առաջադրանքները:</p> <p>Այնուհետև աշակերտները վերադառնում են իրենց նախնական խմբեր և հատկացված ժամանակում մյուսների հետ քննարկում (բացատրում) են իրենց առաջադրանքի հարցերը:</p> <p>Ողջ ընթացքում ուսուցիչը կորդինատորի դերում է, իսկ աշակերտները՝ նաև ուսուցչի ընկերների տալիս են համապատասխան խորհուրդներ:</p>	
6. Տնային հանձնարարություն (2-3 թույլե)	Ներկայացնել տնային առաջադրանքը:	<p>Հանձնարարում է տանը ուսումնասիրել դասագրքի 2.5-րդ պարագրաֆը, պատասխանել պարագրաֆի վերջում բերված հարցերին (զույգ համարները): Իսկ կենտ համարները՝ ըստ ցանկության:</p> <p>Ավելի մանրամասն ուսումնասիրել լաբորատոր փորձերի նկարագրությունը: <i>(Շրջված դասի մեթոդի կիրառում):</i></p>	Գրի են առնում առաջադրանքները:
7. Անդրադարձ (3-4 թույլե)	Ամփոփել դասը՝ վերլուծելով և գնահատելով կատարված աշխատանքը:	<p>Սովորողներին տրվում են հետևյալ հարցերը.</p> <p>Ի՞նչ նպատակներ էինք դրել մեր առջև այս դասին:</p> <p>Հասա՞նք մեր նպատակներին:</p> <p>Ի՞նչ սովորեցի, ինչպե՞ս սովորեցի:</p> <p>Նշեք դասի դրական կողմերը:</p> <p>Վերջում ուսուցիչն ամփոփում է արդյունքները:</p>	Պատասխանում են տրվող հարցերին, ներկայացնում առաջարկություններ:

отформатировано: русский